ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի «Տանձուտի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝տարրական դասարանների ուսուցչի/դասվարի/ թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլը անցկացվում է ըստ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-Դիմում /ձև 1/,1 լուսանկար 3x4 չափսի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
-անձը հաստատող փաստաթուղթ
-«Հանրակրթության մասին»ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
-ինքնակենսագրություն/ձև5/,
-այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրպետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/,
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ,կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ,ամեն օր ժամը 9^{00}-ից մինչև 15^{00},բացի շաբաթ,կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021թվականի սեպտեմբերի 8-ին՝ ժամը 14^{00}-ին, ՀՀ Արմավիրի մարզի «Տանձուտի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ում: Հասցեն ՀՀ Արմավիրի մարզ գ.Տանձուտ 12փողոց 2շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 093-43-99-68 հեռախոսահամարով: